

ՏԱԹԵԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ՄՄ

ՔՆԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄՄ

ՍՈԿՍԻ ՓՈԽԹԿՈՒ ՍՈՒՐԲ ԳԵՒՈՐԳ ՎԱՆՔԻ ՆՈՐԱՅԱՅՏ ԿՈՆԴԱԿԸ

Սկիզբը՝ թիվ 9.

Ավելի ընդգրկուն են Ե. Լալայանի հաղորդած տեղեկությունները վանքի մասին¹, որոնք հրատարակվել են «Ազգագրական հանդէս»-ում²: Ե. Լալայանը մանրամասն նկարագրում է եւ վանքի դիրքը, եւ կառուցվածքը, սակայն մեզ հետաքրքրողը կոնդակին ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող հատվածներն են: Ե. Լալայանը նշում է, որ ունենալով ընդամենը 16 չափ վարելահող, 150 ոչխար, 10 կով, 2 ջորի եւ 2 եզ՝ վանքը ոչ միայն ձրիաբար մատակարարում է բոլոր ճանապարհորդներին, այլեւ Աղթամարի կաթողիկոսությանը տարեկան 260 լիրա տուրք է տալիս իր հոշակի շնորհիվ, «որ Փութկու սուրբ Գէորգը ունի ո՛չ միայն ամբողջ Վասպուրականում, այլեւ Անատոլիայում, Պոլսում, Եգիպտոսում, Պարսկաստանում եւ Ռուսաստանում»³: «Աղթամարի կաթողիկոսարանը աճուրդով յանձնում է վանքը մինին, տարեկան 250–300 լիրայով, վերջինս՝ որ փութկապան է կոչում, պարտաւորուելով նաեւ ձրիաբար կերակրելու այստեղ ապաստանող ճանապարհորդներին եւ նրանց գրաստներին, ժողովարարներ է ցրում ամեն կողմ, ս. Գէորգի անունով նուէրներ հաւաքելու»⁴: Ե. Լալայանը եւս նշում է փութկապանի եւ ժողովարարների՝ աշխարհիկ

¹ 1910 թ. հունիսի 18-ից սեպտեմբերի 13-ը Երվանդ Լալայանը շրջել է Վանի, Տոսպի եւ Հայոց Ջորի գավառակներով՝ իբրեւ ուղեկիցներ իր հետ ունենալով Խ. Լեւոնյանին եւ Հ. Մաղաքյանին (տե՛ս «Ազգագրական հանդէս», Վասպուրական, 1910, XX գիրք, էջ 114):

² Եր. ԼԱԼԱՅԱՆ, Վասպուրական. նշանաւոր վանքեր, «Ազգագրական հանդէս», 1912, XXII գիրք, էջ 97–99, Ե. Լալան, Վասպուրական – հաւատք, «Ազգագրական հանդէս», 1914, XXV գիրք, էջ 45–46:

³ Եր. ԼԱԼԱՅԱՆ, Վասպուրական. նշանաւոր վանքեր, Ազգագրական հանդէս, 1912, XXII գիրք, էջ 98:

⁴ Նույն տեղում:

լինելը: «Վասպուրական — Հաւատք» բաժնում՝ ներկայացնելով կենդանիների նկատմամբ եղած պաշտամունքը, Ե. Լալայանը բերում է ոչ միայն Փութկու Ս. Գեորգի աքաղաղի՝ «ս. Գէորգայ դիկ»-ի մասին պատմությունը, այլեւ լուսանկարը⁵:

Այսպիսով՝ Ե. Լալայանը է թեեւ մանրամասն գիտի Ս. Գեորգ վանքի՝ տվյալ պահին ունեցած գույքի, եկամուտների եւ գործունեության, այդ թվում փութկապանի եւ ժողովարարների մասին, սակայն ոչինչ չի հայտնում կոնդակի մասին:

Կոնդակի մասին խիստ ուշագրավ մանրամասներ է հայտնում Հովսեփ Օրբելին, ով ոչ միայն լսել է դրա մասին, այլեւ անձամբ տեսել եւ ձեռք բերել: 1911 թ. Պետերբուրգի Ակադեմիան նրան գործուղում է Արեւմտյան Հայաստան՝ Վանի վիլայեթ՝ ուսումնասիրություններ կատարելու: Հ. Օրբելին իբրեւ քննության վայր ընտրում է Մոկսն ու Մոկսի բարբառը եւ 2 անգամ (1911 թ. օգոստոս—սեպտեմբեր եւ 1912 թ. ապրիլ—մայիս) լինելով այնտեղ՝ բավականին կարեւոր նյութ է հավաքում⁶: Քանի որ Վանից Մոկս գնալու համար պետք էր անցնել Եղերով լեռը, որի լանջին է գտնվում Ս. Գեորգը, ապա Հ. Օրբելին 2 անգամ էլ եղել է Փութկի վանքում: Առանձնացնենք նրա ուղեգրության՝ մեզ համար կարեւոր կետերը.

ա. Հ. Օրբելին հստակ նշում է, որ իր այցելությունների ժամանակ որեւէ հոգեւորական, առավել եւս միաբանություն չկար, իսկ վանք բառը Փութկի Սուրբ Գեորգի համար նա գործածում է չակերտներով՝ «монастырь»⁷, եւ այն համարում առավելապես իջեւանատուն. «В 1911—1912 гг. никакой братии или постоянно пребывающего духовного лица в Путки не имелось, поскольку это был в сущности странноприимный дом, совершенно необходимый в условиях местности и климата, при опасностях, связанных с переходом через горы весной и осенью (зимой переход через Егеров считался вообще невозможным)» («1911—1912 թթ. Փութկում որեւէ միաբանություն կամ մշտապես բնակվող հոգեւորական չկար, քանի որ այն ըստ էության իջեւանատուն էր՝ խիստ անհրաժեշտ նման տեղանքի ու կլիմայի պայմաններում՝ հատկապես գարնանը եւ

⁵ Տէս Ե. Բ. ԼԱԼԱՅԱՆ, Վասպուրական — հաւատք, Ազգագրական հանդէս, 1914, XXV գիրք, էջ 45:

⁶ Տէս Ի. ՕՐԵԼԻ, Избранные труды, т. 2, Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, 2002, IX—XI:

⁷ Տէս Ի. ՕՐԵԼԻ, Мокс и его обитатели, Избранные труды, т. 2, Ереван, изд. «Гитутюн» НАН РА, 2002, էջ 3:

աշնանը լեռը անցնելու հետ կապված վտանգներով (ձմռանը եղերով լեռամբ անցումն ընդհանրապես անհնարին էր համարվում)»⁸։

բ. Հ. Օրբելին հատուկ հիշատակում է, որ այդ իջեաւնատունը տնօրինում էր «փութկապանը»՝ «Փութկի վերակացուն» («смотритель Путки», «пыткапан»)՝ մի տեսակ վարձակալական, կապալառուական հիմունքներով, ով իրականում տնտեսությանն էր հետեւում։ Թերեւս իրերի դրությունը ճիշտ հասկանալու համար, Հ. Օրբելին նշում է, որ Մոկսում մյուս եկեղեցիների եւ միաբանություն չունեցող վանքերի երեցփոխները կոչվում էին «վանիցտեր» («ваництэрь»), իսկ վանահայրերը կամ կցված հոգեւորականները՝ «վանիցխեր» («ваницхерь»)՝ Այսպիսով նա մեկ անգամ եւս շեշտում է Փութկու Ս. Գեւորգ վանքի «կառավարման» բացառիկությունը։

գ. Նրա հաղորդմամբ՝ ամեն տարի մեծ թվով «հավաքողներ»՝ եւ հայեր, եւ քրդեր, ուղեւորվում էին Արեւմտյան Հայաստանի անգամ ամենահեռավոր անկյունները՝ վանքի համար նվիրաբերություններ հավաքելու, «որը տարեկան, ինչպես ինձ ասացին, կազմում էր մինչեւ 500 ոսկե լիր, այսինքն՝ 4300 ուրբլի ոսկով...» («составлявших в год, как мне говорили, деньгами до 500 золотых лир, т. е. около 4300 рублей золотом...»¹⁰)։

դ. Այս «հավաքողներն» ունեին հատուկ նամակներ («Сборщики пожертвований на Путки снабжались особыми грамотами...»¹¹), որով ապացուցվում էր իրենց իրավասությունը, ընդ որում դրանք Մոկսում հանձնում էր Մուրթուլա բեկը¹² ինչպես հայերին, այնպես էլ քրդերին¹³։ Ժողովականները ուղեւորվում էին աշնանը¹⁴, ընդ որում նախօրեին նրանք հավաքվում էին Մուրթուլա բեկի ընդունարանում, որտեղ վեր-

⁸ Նույն տեղում, էջ 4. այս եւ մյուս տեղերում ուսանողներից արեւելահայերեն թարգմանությունը մերն է։

⁹ Նույն տեղում, էջ 4։

¹⁰ Նույն տեղում, էջ 4։

¹¹ Նույն տեղում, էջ 5։

¹² Մուրթուլա բեկի շնորհիվ Մոկսի հայությունը մեծապես ազատվել է կոտորածից։ Նրա մասին, բացի Հ. Օրբելու նշված աշխատությունը, տես նաեւ Ա. Պո, Վանի, Բիլթիսի եւ էրզրումի վիլայէթները, Երեւան, տպարան «Կուլտուրա», 1912, էջ 362–363։

¹³ Հ. Օրբելին նշում է որ իր համար պարզ չէր՝ Մուրթուլա բեկը հանդես էր գալիս այդ պահին իբրեւ թուրքական պաշտոնյա՞, թե՞ իբրեւ Մոկսի քուրդ բեկ։

¹⁴ Նկատենք, որ ըստ Վ. Փափազյանի վերը բերված հոդվածի՝ նվիրատվությունը հավաքողներն իրենց գործունեությունը սկսում էին գարունը բացվելուն պես։

ջինս նրանց բարի երթ եւ հաջողություն էր մաղթում: Հ. Օրբելին անձամբ ներկա է եղել արարողության նմանվող այդ հավաքներից մեկին¹⁵:

Ե. Վանում 1916 թ. եղած ժամանակ Օրբելուն հաջողվել է ձեռք բերել այդ կոնդակներից մեկը, որի արտաքին նկարագրությունը հար եւ նման է մեր ունեցած օրինակին «1916 թուականին՝ Վանում գտնուելուս ընթացքին, առիթ ունեցայ ձեռք բերելու հայկական այդպիսի մի վաւերագրի օրինակ, որ մի երկար գալար էր՝ պսակուած բաւական անմշակ մանրանկարով, որ անհաւանական կերպով պատկերում էր Փռթկու վանքը, բայց դրա հետ ոչ մի ընդհանուր բան չունէր՝ սկսած եկեղեցիների գմբեթներից՝ վերջացրած մնացեալով: Սակայն գալարի գլխամասի ամենանշանակալի դրուագը եկեղեցու գմբեթին նստած սեւ աքաղաղի պատկերն էր»¹⁶:

Հ. Օրբելին նշում է, որ այն գրված է Ստեփան վարդապետի անունից: Մեր ունեցած կոնդակը Աբրահամ վարդապետի անունից է: Այա ընդհանուր առումով նույն բովանդակությունն ունենալով ու նույն նյութի մասին խոսելով, կոնդակում կան եւ տարբերություններ¹⁷: Հ. Օրբելուն՝ կոնդակից մեջբերած հատվածը ոչ միայն բառացի չկա մեր ունեցած կոնդակում, այլեւ որոշ տեղերում բացակայում է մոտավոր ձեւով. մասնավորապես մեր կոնդակում նշված չէ Եղերով լեռը, իբրեւ վանքում պահվող մասունք հիշատակված չէ Ս. Գեւորգի ականջը, տարբեր է օթեւանող ճանապարհորդների թիվը՝ «100-ներով եւ 150-ներով, եւ սրանցից ավելի ու պակասով» (մեր կոնդակում՝ «Ժ. ԺԵ. մինչեւ Ի.»), սակայն որոշակի նման են օրերի քանակը 2, երբեմն եւ 5 (մեր կոնդակում՝ «Ե. օրով 2. օրով... Բ.—Գ. օր»): Մեր ունեցած կոնդակում չի շեշտվում Ս. Գեւորգի՝ բքից ու փոթորիկներից ճանապարհորդներին ազատելը, ինչպես Օրբելուն տեքստում: Մեր եւ Հ. Օրբելուն կոնդակներում նշված Աբրահամ կամ Ստեփան վարդապետներին եղած աղբյուրներում տեղի կամ Աղթամարի հոգեւորականների հետ որեւէ կերպ նույնականացնելու մեր փորձերն առայժմ ապարդյուն են¹⁸:

¹⁵ Տե՛ս Հ. Օրբելի, նշ. աշխ., էջ 5:

¹⁶ Նույն տեղում, էջ 5:

¹⁷ Հ. Օրբելին կոնդակի մի հատվածը մեջբերել է՝ թարգմանելով ռուսերեն. մեր քննությունը կատարում ենք՝ հիմնվելով թարգմանության կոնդակի տեքստին հնարավորինս մոտ լինելուն: Հոդվածի վերջում համեմատության համար տալիս ենք նաեւ Հ. Օրբելուն կոնդակից չակերտյալ մեջբերված այդ հատվածը:

¹⁸ Բացի անուններից՝ մեր կոնդակում եղած մի կարեւոր հանգամանք կա, որը գուցե կարեւոր կլինի հետագայում այս հարցին անդրադարձ կատարողների համար:

Այսպիսով՝ մեզ հայտնի աղբյուրներն ու ուսումնասիրությունները Մոկսի Փոլթկու կամ Սարի Սուրբ Գեորգ վանքի մասին փաստում են.

Ա. ԺԹ. դարասկզբին այն հռչակավոր վանք էր, ճանապարհորդների համար՝ օթեանատեղի եւ հայտնի էր գուշակություններ անող աքաղաղով:

Բ. Վանքը շարունակում է այդպիսի լինել նաեւ ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին՝ մինչ 1915 թ.՝ հայերի կոտորածներն ու գաղթը Մոկսից ու ամբողջ Արեւմտյան Հայաստանից:

Գ. Աղթամարի կողմից նշանակված աշխարհական վանահայրերի՝ «փոլթկապանների» կողմից վանքի կառավարման մասին մեզ հայտնի առաջին տեղեկությունը 1865 թ.-ից է (թեեւ փոլթկապանցի եզրն արդեն արձանագրված է 1858 թ., ինչը ենթադրում է, որ երեւույթը 1858 թ. եւ գուցե դրանից առաջ է հաստատվել): Փոլթկապանի անմիջական պարտականությունն էր նաեւ վանքում ապաստանած ճանապարհորդներին անվճար սնունդով ապահովելը: Թեեւ վանքի՝ եկեղեցական միաբանություն չունենալը արձանագրված է 1903 թ., սակայն նման վիճակը, կարծում ենք, վաղուց էր:

Դ. «Փոլթկապանները» վանքին նվիրաբերվելիք ընծաներն ու եկամուտը հավաքելու համար ունեն «ժողովարարներ» կամ «կապալառուներ» (կամ այդ եկամուտների հավաքման արտոնությունը վաճառում են նրանց), որոնք որոշակի գումարի դիմաց շրջում են տարբեր գավառներում: Վանքն իր հերթին հավաքված եկամուտից բաժին է հանում Աղթամարին:

Ե. Վանքի համար նվիրատվություններ հավաքող մարդկանց, որպես վավերացում իրենց իրավասություն, տրվում են հատուկ կոնդակներ:

Կոնդակում Փոլթկու Սուրբ Գեորգի հետ հիշատակված են նաեւ «... ի Սրբոյն Վարդանայ զօրավարէս եւ ի Սրբոյն Մինասայ արագահաս վկայէս եւ այլ սրբոց մասանց եւ նշխարաց, որք աստ կան ամփոփեալք եւ ի սոցին սպասաւոր եւ պաշտօնեայ ի Տէր Աբրահամ վարդապետ»: Փոլթկու Ս. Գեորգը որեւէ աղբյուրում չի կապվում սուրբ Վարդանի կամ սուրբ Մինասի հետ, առավել եւս տեղեկություն չկա նրանց մասունքների՝ այստեղ պահվելու վերաբերյալ: Սակայն Մոկսում եղել է Սուրբ Մինաս եւ Սուրբ Վարդան անունով վանք, Ս. Գեորգից բավականին հեռու, Մոկսի հարավում (տե՛ս Ն. ՈՍԿԱՆ, նշ. աշխ., էջ 873–874, 882–883): Շարունակությունը՝ «այլ սրբոց մասանց եւ նշխարաց, որք աստ կան ամփոփեալք», մեզ հուշում է, որ խոսքը թերեւս ամբողջ Մոկսի մասին է: Այդ դեպքում ո՞վ է «եւ ի սոցին սպասաւոր եւ պաշտօնեայ ի Տէր Աբրահամ վարդապետ»-ը: Թերեւս ոչ Ս. Գեորգի վանահայրը կամ պատասխանատուն, քանի որ այդ դեպքում անհասկանալի է մնում մյուս վանքերի հիշատակումը, որոնք Ս. Գեորգի անմիջական հարեանությունը չեն: Առավել հավանական ենք համարում, որ նա Աղթամարի այն միաբաններից էր, ով որոշակի պարտականություն ուներ Մոկսում կամ զբաղվում էր Մոկսի հետ կապված հարցերով: Եվ եթե դա այդպես է, ուրեմն կոնդակն այնուամենայնիվ գրվել է փոլթկապանների օրոք:

Ձ. Վանքը եղել է ոչ միայն հայ փութկապանի, այլև ժամանակ առ ժամանակ քուրդ բեկի տնօրինության տակ:

Ի. Է. ԻԱ. դարերում Փութկու Ս. Գեւորգ վանքին անդրադարձները եւ նրա մասին ուսումնասիրություններն¹⁹ արվել են այս եւ մի քանի այլ հոգվածային ու արխիվային աղբյուրների հիման վրա, եւ որեւէ նոր տեղեկություն չեն հաղորդում խնդրո առարկա կոնդակի մասին:

Փութկու Ս. Գեւորգ վանքի մասին եղած ավանդություններն ու հավատալիքները ներառված են Մոկսի ազգագրական նյութերի ժողովածուում²⁰, Ա. Ղանալանյանի «Ավանդապատում» -ում²¹:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, այսօր Հայաստանի Պատմության թանգարանում պահվում է Արեւմտյան Հայաստանի Վանի նահանգի Վանի գավառի Մոկս գավառակի հռչակավոր Փութկու կամ Սարի Սուրբ Գեւորգ վանքի մի կոնդակ:

Քննելով Փութկու Ս. Գեւորգի մասին եղած աղբյուրներն ու ուսումնասիրությունները՝ պարզեցինք, որ ԺԹ. դարում, հատկապես 2-րդ կեսին Աղթամարի կաթողիկոսության ներքո գտնվող վանքն առավելապես իջեւանատեղի ու հռչակավոր ուխտատեղի էր: Դրանով էլ պայմանավորված՝ մեծ տարածում է ունեցել վանքի համար նվիրատվություններ հավաքելը, որն ընթացել է որոշակի մշակված կարգով: Այդ ընթացակարգում կարեւոր դեր են կատարել այդ նվիրատվությունները հավաքող մարդկանց՝ ժողովարարներին տրված հատուկ կոնդակները, որոնք, կարելի է

¹⁹ Եղած նյութերի ընդգրկունությամբ ուշագրավ է Հ. ՈՍԿԱՆԻ «Վասպուրական-Վանի վանքեր» գրքում վանքին անդրադարձը (մաս Գ., Վիեննա, Մխիթարեան տպարան, 1947, էջ 884–892), վանքն իբրեւ գրչության կենտրոն է ներկայացված Ա. ՄԱԹԵՆՈՍՅԱՆ «Մոկաց Սարի Ս. Գեւորգ վանքի գրչության կենտրոնը XIV–XV դարերում» հոգվածում («Բանբեր Մատենադարանի», 1962, հր. 6, էջ 197–218): Հիմնական տեղեկությունների քաղվածո հոգված է Ա. ՇԱՀԻՆՅԱՆ «Փութկու Սուրբ Գեւորգ կամ Սարի Սուրբ Գեւորգ վանքը» («Էջմիածին», 1963, հր. 11, էջ 58–61), ԻԱ. դարում վանքի տեղադրության, պաշտամունքի եւ դրա ժամանակակից դրսեւորման քննությանն է նվիրված Լ. ՍԻՄՈՆՅԱՆ «Փութկու Սուրբ Գեւորգ վանքը» հոգվածը («Էջմիածին», 2017, հր. 7, էջ 70–95) եւ այլն:

²⁰ Մոկս. Հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ Ա. Հարությունյան, է. Խեմչյան, Մ. Խեմչյան, Ա. Պողոսյան, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2015, էջ 287–289, 526, 532:

²¹ Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ, Ավանդապատում, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1969, էջ 252–253:

ասել, «իրավաբանական» ուժ են ունեցել, մի կողմից հավաստել են տվյալ անձնավորության իրավասությունն ու լիազորությունը, մյուս կողմից՝ հավատացյալներին հորդորել վանքի համար նվիրատվություններ անել: Քննելով մեզ հասանելի աղբյուրներում առկա տեղեկությունները կոնդակի մասին՝ եկանք այն եզրակացության, որ Հայաստանի պատմության թանգարանի կոնդակը իրոք Փոթիկու Ս. Գեւորգին է պատկանել նշյալ նպատակով: Եղած տեղեկությունների համադրմամբ եկել ենք նաեւ այն եզրակացության, որ թերեւս գոյություն են ունեցել նույնաբովանդակ, սակայն եւ շարագրանքով իրարից որոշակի տարբերվող կոնդակներ: Առայժմ թանգարանի հ^մ 352 կոնդակը միակ հայտնի գոյություն ունեցող օրինակն է այս կոնդակներից: Այն վերաբերում է ԺԹ. դարին: Առայժմ հնարավոր չէ որոշել ստույգ ժամանակը, ինչպես եւ կոնդակում նշված Աբրահամ, Մարտիրոս վարդապետների ինքնությունը: Կարծում ենք՝ Աղթամարի կաթողիկոսության վերաբերյալ եղած արխիվային նյութերի, հսկայածավալ հայկական մամուլի հոդվածների, տարատեսակ աշխատությունների համակարգված մշակման արդյունքում առաջիկայում ոչ միայն այս հարցերն իրենց պարզաբանումը կգտնեն, այլեւ երեւան կգան մոտ տեղեկություններ Փոթիկու Ս. Գեւորգի մասին եւ գուցե անգամ կոնդակի մոտ օրինակներ (առնվազն Հ. Օրբելու ունեցած օրինակը)՝ որպես հայ ժողովրդի վայրիվերումներով լի ճանապարհի հերթական ականատեսն ու վկան:

ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ ԶԵՌՔ ԲԵՐԱԾ ԿՈՆԴԱԿԻՑ ՀԱՏՎԱԾ

(*русск* И. ОРБЕЛИ, Мокс и его обитатели, Избранные труды, т. 2, Ереван, изд. «Гитутюн» НАН РА, 2002, էջ 5–6)²²

Итак, следовательно, мы должны обязательно давать милотыню святым обителям у пустыням. Одной из многих таких является построенная и утвержденная благодатью Христа на высокой горе, именуемой Егеров, во

²² Տե՛ս «Текст грамоты, довольно пространной (около 10 тус. Букв), цоцтавленной от имени вардапета Стефана, содержит весьма длинную и обстоятельную молитву, которая призывает благословение на главу всех тех, кто откликнется на просьбу о поддержке обители Путки дарами, деньгами, коврами, войлочными кошмами и провиантом, При этом подробно перечисляются все возможные категории дарителей, в том числе купцы, <столодержатели>, т. е. <банкиры> (меняли, ростовщики), старшины и старосты разного имущественного сосотояния. Призывается я млоитве и ниспослание на них благополучия, связанного с плодливостью стад, пплодородием полей, избавлением стад от падежа, полей и садов и прочих насаждений от вредителей, таких как гусеницы, майские жуки и саранча, людей же с избавлением от заболеваний и пр., — все в чаянии будущих даров и приношений. Заканчивается

имя св. Георга — святой храм и прославленная обитель, что ныне называется Путки св. Георга. И имеются в ней частица и мощи св. Георга, а именно уши и многие другие частиц и мощи, которые совершают много чудес и исцелений больных и страждущих и особенно в отношении незримой помощи путникам, спасая и избавляя от утопления [в снегу] и замерзания от мороза и от вьюги силою всемогущего бога и неовращающимся взиранием св. Георга, скорого в помощи мученика и окрашенного кровью витязя. И посроена и утверждена она на макокке горы, где проходят пути, идущие и в одну и в другую сторону. Во множестве приходят в эту святую обитель и уходят, сотнями и полусотнями, и больше и меньше сего, и располагаются, обычно на два дня, а то и на пять дней, будучи застигнуты вьюгой, и остаются здесь. И все они питаются милосердием божьим и вашими дарами, а когда возгласит кур — отправляются продолжать свой путь. Поистине, если бы не было сей святой обители, — все это множество людей от вьюги и мороза укерло бы. И путники всегда здесь делают привал и зрят и слышат, что ция святая обитель не имеет ни приходов, ни удела. И как столькие приходящие и уходящие находили бы гостеприимство, если бы не дары и милостыня ваши?!

ՀՊԹ Հ^{ՄԲ} 352 ԿՈՆԴԱԿԸ

Ի սուրբ եւ փառաւորեալ, հրաշալի եւ [հ]րաշափառ, սրովբէաճեմ եւ քրովբէապար, ադինասարաս եւ երկնանման, լեռնամէջ եւ բարձրահայեաց Փութկու Սուրբ Գէորգեայ քաջամարտիկ զօրավարի հռչակաւոր սուրբ ուխտէս եւ ի Սրբոյն Վարդանայ զօրավարէս եւ ի սրբոյն Մինասայ արագահաս վկայէս եւ այլ սրբոց մասանց եւ նշխարաց, որք աստ կան ամփոփեալք, եւ ի սոցին սպասաւոր եւ պաշտօնեայ ի Տէր Աբրահամ վարդապետ: Յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան, շնորհք առաքելական եւ աստուածային բազմապատիկ օրհնութիւն եւ նախախնամական գթութիւն եկեացէ եւ հանգիցէ ի վերայ հայկազուն լուսաւորչադաւա[ն] յԱստուծոյ օրհնեալ քրիստոնէիցդ: Ուր եւ հասանէ նամակ օրհնութեանս մերոյ՝ ի քաղաք, ի դասապայս, ի գիւղ, ի վանք, ի յանապատ, ի խան, ի կարավան, եւ այլ ամենայն շէնս: Նախ սրբոց եկեղե-

ցականաց դասուց, խնամածու առաջնորդաց, մեղսաքաւիչ քահանայից, ուսումնասէր սարկաւագաց, հաւատարիմ երեսփոխանաց, պերճապատիւ իշխանաց, գոյիւք զեղուն դօլվաթաւորաց, ողորմածասիրտ մէլիքներաց, արդարադատ ըռէսներաց, հոգեսէր մահտեսեաց, իմաստուն վաճառականաց, ձեռնահմուտ արուեստաւորաց, քրտնաշան հողագործաց, ալեօք ծաղկեալ ծ//րոց, ողջախոհ երիտասարդաց, հարկեւոր կանանց, մաքրամիտ կուսից: Եւ այլ ամենայն չափու եւ հասակի ի Քրիստոս Աստուած հաւատացելոցդ միշտ ի Տէր խնդալ յարագուարճ բերկրանօք. ամէն:

Շնորհք ընդ ձեզ եւ երկնաւոր խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ ամենակալէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ եւ ի Սրբոյ Հոգւոյն կենարարէ եւ յառատածաւալ պարգեւատու բարէրար մարդասիրէ եւ յամէնունակ շնորհողէ իջցէ եւ բնակեսցի առ ձեզ. ամէն:

Օրհնեսցէ զձեզ Տէր Աստուած մեր եւ շքեղափայլ զարդարեսցէ հոգւով եւ մարմնով, տամբք եւ տեղօք, զարմօք եւ զաւակօք, որդովք եւ դստերօք, սիրելեօք եւ բարեկամօք, ընչիւք եւ ապրանօք, վարօք եւ վաստակօք, առօք եւ տրօք, գոյիւ եւ գոյեղինօք, այգեօք եւ պարտիզօք անդօք եւ անդաստանօք, լերամբ եւ դաշտօք, գետօք եւ աղբերօք, ի յելս եւ ի մուտս, ի տուէ եւ ի գիշերի, ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել, ի շինել եւ ի տնկել, ի սերմանել եւ ի հնձել եւ յամենայն ժամու շնորհք եւ ողորմութիւնն Աստուծոյ ի վերայ ձեզ լիցի. ամէն:

Այլ եւ ի գալ նամակիս մերում առ ձեզ, բանայ Տէր Աստուած զդուռն սահմանաց ձերոց զամենայն պատիւ եւ պատուհասն, որ գան ի վերայ աշխարհիս վասն ծովացեալ մեղաց մերոց ի խրատ մեզ գսովն, գսուրն, զտարածամ մահն զդալուկն, զջորեակն, զմնինայն, զմորելն, զթրթուրն, զժանկն, զկարկուտն, զկայծակն, զամպոց խառնակումն, զհեղեղաց յարուցմունքն, զջրոց նուագութիւնն, զմարդկանց եւ զանասնոց սխալ ծննդականութիւն, զհեծել շարժութիւնն եւ զայլ ամենայն պատահարար վնասակարութիւնքն բառնայ ի ձէնջ Տէր Աստուած մեր. ամէն:

Այլեւ օրհնեսցէ զձեզ Տէր Աստուած մեր եւ տացէ ձեզ կրկին բարութիւն, առատութիւն եւ լիութիւն, խնդութիւն եւ խաղաղութիւն, հաստատութիւն եւ անշարժութիւն, սէր եւ միաբանութիւն, յուսոյ պնդութիւն եւ սիրով առ նա կապակցութիւն եւ ամենայն բարի իրաց ձերոց յաջողութիւն. ամէն:

Եւ ընդ աստուածապարգեւ շնորհագեղուն օրհնութեանս ծանիք, ո՛վ գերազնիւ ամենամեծար սիրելիք մեր ի Տէր, յաղագս Փութկու մեծա-

հրաշ հռչակաւոր սուրբ ուխտիս, որ յանուն սրբոյն Գէորգայ քաջամարտիկ զօրավարին է կառուցեալ: Սորա սքանչելագործութիւնն ամենայն տեղի տարածեալ կայ, զոր միշտ առնէ հրաշս մեծամեծս առ ամենայն մարդիկ, ոչ միայն հաւատացելոց, այլ եւ ամենայն ազգաց, որք դիմեն ի սուրբ ուխտ, առն զհայցուածս սրտից իւրեանց, զօրութեամբ սրբոյն Գէորգայ զօրավարին: Վասն զի գլուխ է ամենայն մարտիրոսաց եւ կատարիչ ամենայն խնդրուածաց մարդկան, զոր սակաւուք փոքր ի շատէ պատմեցից սորա սքանչելիսն, զոր արարեալ է եւ առնէ միշտ: Արդ, սուրբն Գէորգ մինչ դաւանէր զՔրիստոս, հարին զկողս նորա գեղարդ, եւ հեղաւ արիւն բազում, զոր տարեալ եղին ի բանդի, եւ հրեշտակ Տեառն էջ ի բանդն եւ ողջացոյց զվէրս նորա: Եւ հանին զսուրբն ի բանտէն եւ հոլովեցին ի յանիւս, յորում կայր սուր սլաք, եւ շրջեցուցին զառ ի վայր, մինչ կտրատեցաւ ամենայն մարմին, եւ հրեշտակ Տեառն էջ յերկնից եւ ողջացոյց զվէրս նորա: Եւ բարձեալ տարան ի տուն այրի կնոջ միոյ, եւ նստաւ առ ի խարըսխի սեանն, զոր առ ժամայն կանաչեցաւ փտեալ սիւնն, եւ բարձրացաւ ժէ. (17) կանգուն ի տանիս տանն: Զոր եկեալ կինն այրի ետես զսին տան իւրոյ կանաչացեալ, եւ սեղան բարելի առաջի սրբոյն, իսկոյն հաւատաց ի Քրիստոս եւ մտեալ ի մառանն եբեր մանուկ մի անդամալոյծ Թ. (9) ամաց, եւ սուրբն Գէորգ դրոշմեաց զնա նշանաւ սուրբ խաչին, առ ժամայն յարուցեալ վազեաց ողջ անդամօք: Եւ անհաւատիցն առեալ զսուրբն Գէ<ր>որգ արկին ի խոր կրի, եւ հրեշտակ Տեառն պահեաց զնա առողջ ի մէջ կրին անվնաս, աւուրս Գ. (3) եւ ել ի կրէն ամբողջ, եւ տեսեալ բազմաց հաւատացիին ի Քրիստոս: Եւ յետ այնորիկ ազուցին սրբոյն Գէորգայ կօշիկս երկաթի եւ բեւեռեցին զայն ի յոտսն եւ շրջեցուցանէին զնա այսր եւ անդր, զոր Գ. (3) անգամ մեռաւ եւ յարեաւ ի մեռելոց շնորհօքն Քրիստոսի: Եւ ի շորրորդումն ապա հանգեաւ ի Քրիստոս: Եւ Թ. (9) անձինք մեռեալք յարոյց, որք ԲՃ. (200) տարոյ մեռեալք էին: Նա եւ զղերիկոսի մեռեալ եզն յարոյց եւ զդատաւորաց աթոռսն կանաչացոյց: Այլ եւ զգերեալ մանուկն, որ Ժ. (10) աւուր ճանապարհ ի յաշխարհէն ընկուց ազատեալ յական թօթափել ազատել եբեր ի դուռն եկեղեցոյն Հօր իւրոյ: Եւ այլ բազում սքանչելագործութիւն արարեալ է եւ միշտ առնէ:

Արդ, այս սուրբ ուխտս, որ կոչի Փութկու Սուրբ Գէորգ, զոր շինեալ կայ յանուն սրբոյն Գէորգայ քաջամարտիկ զօրավարին, եւ կառուցեալ է սա ի սահմանս Մոկաց ի լեռնամէջ տեղւոջ ի վերայ վայելուչ

բլրի, եւ է սուրբ ուխտս այս ի վերայ ճանապարհի, զոր ամենայն աւուր ժ.—ժԵ. (10—15) մինչ Ի. (20) ճանապարհորդ միշտ անպակաս են աստի, եթէ մերայնոց ազգաց եւ եթէ այլազգաց Ե. (5) օրով, Զ. (6) օրով աստ օթեւանս առնեն, մինչ որ հաւն խօսիցէ, ապա թէ ելանէն եւ գնան ի ճանապարհս իւրեանց: Լեալ է, որ Բ.—Գ. (2—3) օր հաւն չէ խօսել, եթէ առանց խօսելոյ հաւին երթայցեն, ի մեծ փորձանաց պատահին, ստուգիւ յայտնի է այս ամենեցուն: Այս ճանապարհորդքն ամենեքեան ի սուրբ ուխտէս ուտեն եւ տեղիս յոյժ անճարակ տեղի է. ո՛չ արտորայս ունիմք եւ ո՛չ անդաստանս, ո՛չ թէ եւ ո՛չ վիճակ եւ ո՛չ տեսութիւն, զի արքունուստ լիցի ռոճիկ մեր: Այլ յԱստուած եմք ապաւինեալ եւ աղօթք սրբոյն Գէորգայ զօրավարին եւ ի տուրս ողորմութեան բարեպաշտօն աստուածասիրացդ եմք վստահացեալ: Վասն որոյ ահա առաքեցաք առ բարեսէր սիրելիքդ զհարազատ որդեակն մեր եւ զհաւատարիմ պաշտօնեայն սրբոյ ուխտիս վասն ողորմութեան: Արդ, ի գալ դորին առ ձեզ աղերսիւ խնդրեմք ի ձէնջ, զի յամենայն կողմանց օգնութիւն առնիցէք սրբոյ տանս, զմիմեանս յորդորելով ի տուրս ողորմութեան թէ՛ ժամուց, թէ՛ քառասնից, թէ՛ խոստմունք, թէ՛ մատաղ, թէ՛ յիշենք, թէ՛ անօթ սուրբ եկեղեցւոյ, թէ՛ հոգեբաժին, թէ՛ ջլից, թէ՛ արծաթեղքն, թէ՛ պղնձեղէն եւ թէ՛ այլ արդիւնք. զինչ որ վայելէ այս երկնահանգէտ սրբոյ տանս: Զամենայն յանձնեալ տայք ի ձեռս հարազատ որդւոյդ մերոյ այս նամակաբերիս, զի ի դմա հասեալն, մեզ եւ ի սուրբ ուխտս է հասեալ, զոր մեր ընկալեալ զպէտս եւ զկարիս սրբոյ տանս հոգասցուք, եւ մեք ըստ մերոյս պարտականութեան, յաղօթս մաղթանաց եւ պաշտօնս պաղատանաց մատուցուք առաջի տաճարի Տեառն, եւ ի սեղանոյ Աստուծոյ, վասն ձերոյ ողջութեան, կենաց յերկարութեան եւ ամենայն գործոց ձերոց յաջողութեան, եւ մեղաց թողութեան:

Արդ, սիրելիք մեր, դուք զողորմութիւն տալն մի՛ ձանձրանայք, զի ողորմութիւնն անքուն որդն դժոխոց սպանանէ եւ զմարդն հաւասար հրեշտակաց առնէ: Որպէս որ սուրբ առաքեալն Յակոբոս ասէ, թէ ողորմութիւնն բարձր գլուխ պարծի առ դատաստանան Աստուծոյ: Եւ սուրբն Յօհան Ոսկիբերանն ասէ, թէ շամաչէի զողորմածն մարդն Աստուած ասէի, բայց ասեմ եւ ոչ ամաչեմ: Եւ իմաստնացեալն Սողոմոն ասէ, թէ ողորմութեամբ շինեսցի աշխարհ: Արդարեւ շինութիւն աշխարհիս ողորմութեամբ է: Արդ, որովհետեւ այնքան գովելի է ողորմութիւնն, պարտիմք միշտ ողորմութեան հետեւել եւ զհրաման սրբոցն Աստուծոյ կատարել: Որ եւ ողորմութեամբն Աստուծոյ եւ տրօք ձերօք այս սուրբ տունս միշտ պայ-

ծառ պահիցեմք, եւ զճրագ սրբոյ տաճարիս անշիջանելի մնասցէ ի փառս Աստուծոյ եւ ի պարծանս ձեր. ամէն: Այլեւ որ քան այս մեծահռչակ երկնահանգէտ սուրբ ուխտս, սաղմոսերգութիւն, պաշտօն պաղատանք եւ պատարագ մատչիցի յամենայն աւուր եւ ի բոլոր տարին, յայնց յամենայնէ ձեզ եւ ձեր ննջեցելոցն, մեծ մասն եւ հարուստ բաժին հանցէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս. ամէն: Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն”:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մոկս, Փութկու Ս. Գեւորգ վանք, կոնդակ, նվիրատվություն, ԺԹ. դար, Աղթամարի կաթողիկոսություն, Հովսեփ Օրբելի, Հայաստանի պատմության թանգարան

РЕЗЮМЕ

В XIX веке монастырь Путку Святого Георгия, расположенный в округе Мокс Западной Армении (ныне территория Турции), пользовался большой популярностью как место паломничества и отдыха для путешественников. В какой-то момент монастырь перешёл под управление светского чиновника, назначенного Католикосатом Ахтамара, которого называли «Путкапаном». Этот администратор отвечал за хозяйственные дела монастыря и был обязан предоставлять путникам бесплатное жильё и еду.

Слава монастыря выходила далеко за пределы Мокса, распространяясь на отдалённые регионы. Люди из разных мест делали пожертвования в его пользу. Для сбора этих пожертвований направлялись особые посланники с официальными документами, известными как кондаки, которые уполномочивали их путешествовать и собирать средства от имени монастыря.

Уникальный пример такого кондака — с 1921 хранящийся в Историческом музее Армении — служит материальным подтверждением этой практики. Этот кондак представляет собой бумажный свиток (137,5 × 24 см), наклеенный на ткань, с изображением монастыря, петуха на его куполе и святого Георгия, поражающего дракона. В тексте упоминается некий вардапет Абраам. Документ написан болоргиром и датируется XIX веком.

Наш анализ подтвердил его подлинность и соответствие историческим свидетельствам. Хотя это единственный известный сохранившийся экземпляр, в прошлом, вероятно, существовали и другие подобные кондаки с небольшими различиями в тексте. Этот документ представляет большую ценность для понимания религиозных, культурных и экономических реалий того времени.

SUMMARY

In the 19th century, the Poutku Saint George Monastery, located in the Moks district of Western Armenia (present-day Turkey), enjoyed great popularity as a resting place for travelers and a notable pilgrimage site. At some point, the monastery came under the management of a secular official appointed by the Catholicosate of Akhtamar – known as the “Poutkapan”. This administrator was responsible for the monastery’s economic affairs and was obliged to provide travelers with free shelter and food.

The fame of the monastery extended far beyond the borders of Moks, reaching distant regions. People from afar made donations to support the monastery. To collect these donations, emissaries were sent with encyclicals (kondaks), authorizing them to travel and raise funds on behalf of the monastery.

A remarkable example of such an encyclical— since 1921 preserved at the History Museum of Armenia – provides concrete evidence of this practice. It is a paper scroll (137.5 × 24 cm) mounted on fabric, featuring a drawing of the monastery with a rooster on its dome and Saint George slaying a dragon. It mentions a certain monk Abraham and is written in “bolorgir” script, dating to the 19th century.

Our analysis confirmed its authenticity and correspondence with historical accounts. Though this is the only known surviving example, similar encyclicals likely circulated in the past with slight variations in wording. This document offers valuable insight into the religious, cultural, and economic practices of the time.

